ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1/2.5-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային
հանձնաժողովի հայտերի բացման նիստի

2024թ. հունվարի 11-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 2.5 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում՝ առնվազն 50 անձ»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) (հայտերի բացման) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Աշոտյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական
Մ.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Ներկայացված հայտերի բացում armeps.am համակարգի միջոցով:
2. Հայտերի գնահատման ժամկետի սահմանում:
3. Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի հաստատում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ

1. Ծրագրի հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում՝ առնվազն 50 անձ»** միջոցառման շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

2. Ծրագրի հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում՝ առնվազն 50 անձ»** միջոցառման իրականացման համար մրցույթին ներկայացվել է 6 (վեց) հայտ՝

- «Բաքեթ Լիսթ Տուրս» ՍՊԸ-ի,
- «ՎԻԶԱՐՄ ԹՐԵՎԵԼ» ՍՊԸ-ի,
- «ZԷՅԷՄ.ԹՐԵՎԼ» ՓԲԸ-ի,
- «Էլիտար» ՍՊԸ-ի,
- «ԱՐԱՐԱ» ՍՊԸ-ի,
- «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ի կողմից:

Լսեցին՝

Հայտի գնահատման ժամկետի սահմանման մասին:

Որոշեցին՝

Հայտի գնահատման ժամկետ սահմանել մինչև 2024թ. հունվարի 17–ը, ժամը 12-^{00}-ն:

Լսեցին՝

Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա և ժամի հաստատման մասին:

Որոշեցին՝

Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստն անցկացնել 2024 թ. հունվարի 18-ին, ժամը 10-^{00}-ին:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) - _____

Ա.Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Աշոտյան - _____

Մ.Հակոբյան - _____

Շ.Հովսեփյան - _____